



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:


Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Ե ՏԻՇ ԱՆԼԻՔ - ԳՐԻԳՈՐՅԱՆ

183x8

Մօղա



Ե - 1880



891.99
S-38.

3311

uv

ቻ 391.99

S-38

ՄՈՒՆ

ԿՕՄԵԴԻԱ - ՎՈԴԼՎԻԼ ՄԵԿ ԱՐԱՐՈՒԱԾՈՎ.

Եդ անիծուած չար մօդան
Ել չե տևում մէ տարի,
Գէլաքնուրի ծախօզն
Էնքան չունի մուշտարի:
ԲԱՖԻՆԻ ՓՈՒՆՁ: ԵՐԵՒ 203.

ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆ ԷՄԻՆ ՏԵՐ ԳՐԻԳՈՐԵԱՆՑԻ

四百五十一

1880



ՄԻ ՔԱՆԻ ԽՈՍՔ:

Дозволено Цензурою. 12 Мая 1880 г. Тифлисъ.

96404-WR

Խ016057

Типографія Эмина Теръ—Григорянцъ въ Эривани,
на углу Астафьевской и Бебутовской улицъ.



Սորանով լոյս է տեսնում մեր
Հայոց երկրորդ թատրոնական
աշխատամիրութիւնը, որոյ հա-
մար աւելորդ չէր լինիլ ասել մի-
քանի խօսք:

Մօղան մեղանում հետզհետէ
ծաղկումէ, նորա եկրպագուները կոյր-

— II —

գկուրոյն աւելանում են: Հետզիտէ
մուտք է գործում և հասարակ դա-
սակարգի մէջ, դա, նամանաւանդ
վերջինի համար, դառնում է, կար-
ծես, մի կենսական պահանջ, մի
ամենակարեւոր խնդիր . . . առանց
հասկանալու դորան սպառնացող
վնասը, առանց ծանրութեթե անե-
լու ծընողների կամ ամուսինների
գրպանն ու կարողութիւնը և թէ
դորանից ի՞նչ զրկանքներ, ի՞նչ
անբաղդութիւններ են յառաջ գա-
լիս՝ այդ, կարծեմ, ամեն մէկիս
համար վարագուրված չէ:

Ահա այդ է, որ մեզ դրդեց, մի
այդպիսի պատահած անցք լոյս
աշխարհ հանել մեր կարողութեան
չափ, թատրոնական ձեւ տալով

— III —

նորան և միևնոյն ժամանակ պահ-
պանելով տեղական բարբառ:

Դորա մէջ չի գտնիլ ընթերցողը
ծաղրաշարժ տեսարաններ կամ սրա-
խօսութիւններ, բայց դոցա փոխա-
րէն - պարզ անցք, որ տեղի է ու-
նեցել Երևանում, որոյ ընդհանուր
կապը և ընթացքը բոլորովին հա-
րազատ են նոյն անցքին:

Է. Տ. Գ.

ԱՐԴԱ

ՊՕԴԱ

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

ԳԱՍՊԱՐ, վաճառական, միջահասակ:
ԹԱԳՈՒՀԻ, սորտ աղջիկը, 14 տարեկան:
ԹԵԿՈՒ, սորանց զբացի աղջիկը և Թագուհու սերտ ընկե-
րուհին, 15 տարեկան:
ՎԱՐԴԱՆ ԱՂՋ, ծերունի վաճառական:

Անյօթ պատրահոծ է Երեւանում:

ԿՕՄԵԴԻԱ-Վ.ՕԴԼՎԻԼ ՄԵԿ ԱՐԱՐՈՒԱԾՈՎ.

Տեսարանը ներկայացնում է մի
չասարակ սենեակ: Ա.ջ կողմում:
դուռը, սեղան և մի քանի աթոռ-
ներ. խորքում դուռը: Զախ կող-
մում լուսամուտներ և թախտ: Տե-
սարանը համեստ է և զուրկ ամեն
տեսակ շքեղութիւններից:

ՏԵՍԻԼ Ը.

(Վարագոյը բարձրանում է. թեկդին նստած է Թախտի
վերայ, իսկ Թագուհին սեղանի մօտ՝ աթոռքի վերայ: Թագու-

հու երեսին երևում է չափազանց բարկութեան արտասուք,
որը շուտ շուտ սրբում է):

Թէկղի:

Բա՞ այ, սուս կենալը ըտէնց կլի հա՞ մար-
թամիջի ոչ շորդ ա էրեվում, ոչ էլ զքսդ: Ախր
մի ասա տեսնեմ թէ դու ընչի՞ տէր ես:

ԹԱԳՈՒՀԻ:
Լացով:

Թէկղի ջան, դլուստ որ մարթ քանի հնա-
զանդ ա ընում իր հօրն ու մօրը, Էնքան էլ
զլիին են նստում: Ա.յ, հմի տեսնենք, Էն օյինը
հանեմ հայրիկի գլուխը որ քէֆը գայ: Ես ըն-
չանք հմի ասում էի. մարթ ա, ինքը լաւ
կհասկանայ թէ ինչ ա ինձ հարկաւոր

Թէկղի:

Ո՞նց չէ, կհասկանա րամ, քու հօրն օղորմի,
հէնց քանի որ սուս կենաս, կկարծի թէ չիս
հասկանում, ու ինչ ա որ մի քանի մանէթ
չխարջի, իրանչ չիմանալու ա գնում: Հալրաթ,
իրան էդ ձեռք կտայ:

ԹԱԳՈՒՀԻ:
Լացով:

Ախր թէկղի ջան, մէկէլ մտածումեմ թէ

Հօրս ոնց զուեմ, ինչ ասեմ: Ախր ես ընչանք
հմի միշտ նրա կամքովն եմ ժամ էկէ:

Թէկղի, արհամարհական:

Ինչ ասե՞ս, ո՞նց թէ ինչ ասես: Բա ի՞նչ
ասեց էն էն էն փոնչի Գրիգորի թոռը, որ էս
սհաթին մի մինթանայ ա հաքնում, որ սկի
օրումդ էլ տեսած չես ընի:

ԹԱԳՈՒՀԻ:

Ախր ո՞նց արեց:

Թէկղի:

Երկու ոտը մի մաշիկ դրեց ու հօր հետ բա-
րեբար կոիւ տուեց. հէրը մէկ ասեց ու նա էլ
տամնըմէկը, այ ոնց արեց: Մի տեսնես նրա
մինթանան . . . այ մինթանա: Փոնչի Գրիգորի
թոռն եմ ասում, որ հաքնում չի ու դուս գալի,
ոնց որ գոմի գոնիցը վարթ կպցնես: Ա.յ, որ
էն մինթանից էլ մի հատ դու ունենայիր . . .
ջահիլ տղերքի Փոքիքը կդուս գային քեզհամար
ես իմ Աստօձը: (աշխատանկ) Ա.յ մինթանա . . .

ԹԱԳՈՒՀԻ:
Լացով:

Ի՞նչ ուանդ աս

— 8 —

Թէկղի:

Կապիտ, ամա թոռնդ կապիտ, մաւի ռանդ
ա էլի, թէ ասեմ քիշմիրա:

ԹԱԳՈՒՀԻ, նոյնպէս:

Աբորկեք էլ ունի:

Թէկղի:

Իրեք դաթ:

ԹԱԳՈՒՀԻ, լացը աւելի սաստկացնելով:

Բանտեր էլ ունի ջերի վըէն, հմի մօդէն
ընէնց ա:

Թէկղի:

Ջիբերի վըէն ես ասըմ, թևերի ըստեղա-
րենքն ես ասըմ, ետեի ըստեղարենքը . . .

ԹԱԳՈՒՀԻ, նոյնպէս:

Կոճակները ոնց:

Թէկղի:

Կոճակները . . . կոճակները բիրուան տառ
տառնը հինգ գումին մենակ էն մինթանին շա-
րած, մի խօսքով մինթանա եմ ասում . . . ես
էլ պտի ոնց որ ըլի էն կառից առնել տամ

— 9 —

ու կարել տամ. ջհանդամը թէ մի օխտ ութ
մանէթ էլ կարիլը կամենայ: Ամա բայց հաք-
նելն էլ կամենայ է:

ԹԱԳՈՒՀԻ, նոյնպէս:

Լաւ, այ հէր, փոնցու թոռը, որ բացի ցա-
մաք հացից սաւահի բան չընի ուտելու, էն
թաւուր մինթանա ա հաքնիմ, բաս ես իմ
մօք ախչիկը չնեմ թէ քեզ իմ ուզածը առ-
նիլ՝ չտամ Եավաշ . . . կթողնեմ որ ինձ վրայ
իմ թայգաշները ծիծաղան:

Թէկղի, ժպտադէմ:

Ծիծաղան ասիր միտս ընկաւ, ալսչի. կիրա-
կի օրը որ Աստօծաձին ինք գնում ուխտ, ուստ
էկանք Մալթանին . . . էն գէորքի աղջեկն
ի՞նչ ա . . .

ԹԱԳՈՒՀԻ:

Հա:

Թէկղի, նոյնպէս:

Էն: Նրա վրի հազած ամեն բանն էլ մօդ-
նի էր, ամա զլուխը լէվանդի աղլուխ էր կա-
պէ, որ էս էրկու տարի կլի՝ մօդից ընկիլ ա:

(ծիծառվաշ) Մեր ախջեկերքը որ տեսան թէ չէ
մի փափաց քցեցին իրար մէջ ու մի ծիծաղ
սալքեցին որ՝ էլ չեմ կարա ասի: թէ ասեմ
նա էլ բան հասկացաւ. մի կարմբատակեց, մի
կարմբատակեց որ՝ դառաւ լաբլաբու. զլուխը
կախ քցեց ու եալս: Էլ մեր աչքին չերեաց:

ԹԱԳՈՒՀԻ: Խղճալով:

Է, լաւ, խի՞ որ:

ԹԵԿՂԻ, դարմացած:

Ե՛ա, բա ըստէնցէլ բան կլնի, քա՞ մօդնի շո-
րերն ասեմ թէ լէվանդի աղլուխը:

ԹԱԳՈՒՀԻ:

Խի՞ լէվանդի աղլուխը ի՞նչ պակաս ա որ,
համ լաւ հարգի, համ էլ սալամաթ խաս աղ-
լուխ ա հօ:

ԹԵԿՂԻ:

Ինչ անեմ թէ սալամաթ խաս ա. մօդից
ընկել ա ու հարդութիւնն էլ կորել ա:

ԹԱԳՈՒՀԻ:

Բա հմի՞ ինչ են կապում:

ԹԵԿՂԻ:

Խի՞ որ, էդ էլ չես իմանում ախչե՞ հմի եա
բաղգաղի աղլուխ, եա, թէ որ շոք ընի, գաղէ
աղլուխ են կապում—չես տեսէ՞ . . . (Քջայ,
ուրութի) Հա, զորթ իմ թաղա մեղալիօնն ու
բրասէթը տեսմի:

ԹԱԳՈՒՀԻ:

Զէ: Մէդալիօնի հմար ցէպոչկայ էլ մուել եա:

ԹԵԿՂԻ:

Բա վոյ ֆողն իմ պլիսին: Մէդալիօնն էլ
ցէպոչկով կախ կտան:

ԹԱԳՈՒՀԻ:

Բա ո՞նց

ԹԵԿՂԻ:

Այ, տհօնումես, ինչ կնշանակի չտես ես,
բա հերդ չեմանչում որ քեզ ըստէնց զուրկ ա
պահում: մէդալիօնի հմար էրկու մատ, հլա-
իրեք մատ լէնքի սև մախմուրէ լէնտ են առ-
նում, անցկացնում ու ընէնց են շնրիցը կա-
պում:

— 12 —

ԹԱԳՈՒՀԻ:

Խի՞՞ որ, էժանութեան հմար ա, հա՞, մախ-
մուր աէսոնկէն:

ԹԵԿՈՒ:

Էժանութիւնը որն ա, քա, — մօդէն ընենց ա:
Այ, կուզես գնանք տես:

ԹԱԳՈՒՀԻ:

Գնանք . . . ամա հայրիկս հմի կդայ է:

ԹԵԿՈՒ:

Բան չկայ, ըստեղչե մեր տունը, ձեռաց ետ
կդառնաս: (Քեր Էն իշտամ). Ամա ինչ որ ասեցի
չմոռանաս, հա՞, տե՞ս, ոնց որ ես եմ անում,
ընենց էլ դու արա. ուզի, զո՞փի, լաց իլ, ասած-
ները մի լսի, տես ո՞նց ա միւս օրը բերում
ուզածդ:

ԹԱԳՈՒՀԻ, գնալով:

Այ, հմի կտեսնենք, թէ ամենն էլ միան-
քամից առնել չտուցի:

— 13 —

ՏԵՍԻՆ Բ.

ԳԱՍՊԱՐ, ներս է մանում միջի դռնից: Միայն:

Տես աշխարքը ինչ աեղն ա հասել է . . .
Մարթիքը բխովից են փախչում, ամա բայց հմի-
կուայ կնանիքը բխովի մէջ են մանում . . . նոր
մի մենձաւորի կնիկ աեսայ որ, էս զլսկում մին-
թանեն էնքան նեղ էր կարէ — միջին ժաժ գալ չէր
կարում, թէ որ ման էլ գալիս էր, ըսենց էր անում
այ (յոյ է պալիս բեռուծ էնոց նոն գույս չեղ, հա-
ղիւ ռայ ռայ ստուզ բնելով): Բալքի մի առու ա
ռաստ գալի, ո՞նց պտի թռչէր . . . ետեի
վէշնէլ էնքան երգար էր աղբաթիսկրինը որ
բաց թռղար է, ըստիան ընդեղ կհասնէր, հա:
չ մի ասէք թէ ինչ էր արէ էն երգար պոչի
հետ, մի մենձ զայթան էր կապէ մէջքիցը, էն
զայթանի ծերին էլ մի զատ կար՝ նրանով մին-
թանի ետևի էն ահազին եքա պոչը վեր էր
քաշէ, հազար ու մի տեսակ փոթեր էր դարսէ
ըստեղարէնք ու ընենց էր մանդալի . . . Մինը
հարցնող ընի ախր. թէ երգար պտի ընի՝ ընչի՞
ես վեր քաշէ, թէ կարձ պտի ընի՝ ընչի՞ ես
էնքան երգար կարէ . . . ըսէնց էլ խայտառա-
կութիւն . . . Այ անաքանդներ հազիր մի

քիչ կարծ կարիլ տաք էդ գլոկումի պոչը ինչ
կըսի է՛—համ կարքին շնորքին կըսի, համել մի
էրկու շահի պակաս կնստի . . . օգուտ չի՞ . . .
վայ մօ՛դա դուս քցող քու էն էն էն . . . ինչ
ասեմ ախր որ սիրոս հովանա . . . Ամա փառք
քեզ Ասոօձ որ մեր ախչերքը սրանցից հե-
ռու են, թէչ քու գուշմանը: Տօ, մեր ախչը-
կելքը մարթի որթի են, ինչ կհաքցնես, հաք-
ցլու, ով առաջիդ խօսողը, ի՞նչ կհամարցա-
կեն . . . ով կհամարցակի . . . (Ման է գո-
լու: Միջաց): Վոյ, զորթ էն ո՞ր օրն էր տեսայ
մեր ախչերանց ու կնանքո՞նց (Տպածումն է) . . .
միտս չի գալի . . . հա, նրանցից մի քանիսն էլ
բիրդան 10—15 դուժին կոճակ հաւաքել էին մի
մինթանի վրայ ու մի ընէնց էլ (յոյց պալով հան
էլած չել ծաշլոծու էլլորդ) կաոր կաոր գոլով
ու ծումնելով էլ ման են գալի որ կասես գու-
րելնատի եա էն մենձ մենձ աղեքանց կնիկ ըւ-
նեն . . . ամս բայց մօտիկանաս տեսնես ինչ.
մինը փանչու աչիկ ա, մինը դուրգեալի կնիկ ա
մինը, չզիտեմ, սապօկչու քիր ա . . . եանի մե-
րսնք պակաս են որ գովացի՞ . . . թուրքը ա-
նիթած ա, ամա, խօսքը օրինաց—ասում ա
,,Բունի զոյասան նէջա զաշար“ հմի մեր հայ

կնանքո՞նցն ու աղջկերանցն ա . . . (Գլուխը
շործելով հան է գոլիս) Ավսոս չի իմ ախջեկը, թա-
քուհիս, զրուստ որ Աստծու գառնա. դվորը
ծուես դէնն էլ կէթա . . . (Հպարա) ես էն թաւուր
ախջեկ կըպահեմ; կմէնձացնեմ... (Ֆառ բէրելով)
Ամա իմ օղորմած հոքի կնիկս ինչ հօր որթի
էր—որ շորը վրէն քրքրուէր՝ չէր ասի թէ առ,
ընչանք որ չաենէի ու չառնէի . . . վա, ախջեկս
էլ նրա կտորը չի՞ . . . (Թջոց) զորթ հմի Վար-
թան աղէն էլ կգայ ու, թաքուհին դեռ հալա-
սմաւարը չի քցէ . . . թաքուհի, . . . թա-
քուհի . . . մի տեսէք ինչ տղայ եմ ձարէ թա-
քուհուս հմար . . . թաքուհի:

ԹԱԳՈՒՀԻ, Կողիսի ետեկից:

Համմին . . .

ԳԱՍՊԱՐ

Ինչ էլար է՛, մի ստեղ արի . . . (Հանդիսականաց)
Առուտուրներս էլ քեասագ ա, ախպէր, էլ փող
չկայ էս անիթած էրեանումը ինչ ա, ընչանք
մի արշն չիթ ես ծախում, Փոքիդ ըստեղ են
բերում: Հազար մի տեսակ օրթումներ ես ու-
տում ու անջախ անջախ ես մուշտարուն . . .

Վա, էս ախջեկը լի՞ չե գալեի՞ . . . թաքու-
հի՞ . . . փիա . . . թաքուհի:

ԹԱԳՈՒՀԻ, Նոյնպէս:

Ի՞նչ ա է . . .

ԳԱՍՊԱՐ:

Չոռը պինչդ ա վա. տօ մի ըստեղ արի է,
բան եմ ասում ախր:

ԹԱԳՈՒՀԻ, Նոյնպէս:

Գալիս եմ:

ԳԱՍՊԱՐ:

Չենդ լսումենք ու քեզ չենք աեմնում . . .
թաղա հարս հօ չես, որ երես բացուկ տանք
ու նոր էրեսդ տեսնենք . . . փիա (Բարձոցած)
թաքուհի՞ . . .

ԹԱԳՈՒՀԻ, Նոյնպէս լացակրկնած:

Չեմ . . .

ԳԱՍՊԱՐ:

Ո՞նց թէ չեմ, բան եմ ասում, մի ըստեղ
արի . . . չեմը ո՞ն ա . . . (Քջայ) Ալսի, թա-
քուհի . . . տօ մի գէսն արի է . . . (Քւ-
էշյ): Ըստեղ բան կայ . . . ինչ որ ա էլի մի . . .

(Համաց գնումէ թէպի աջ դուռալ և նայում է նորո-
նից մես ունեակը) ԸՆԴՄՈՒՄ . . . ասեցի որ բան
կայ . . . ընենց ա թթուշնէ որ՝ կասես հնդու-
հաւ ընի . . . թաքուհի՞ . . . լի՞ ես թթուշ-
նել բալամ, արի ըստեղ մի տեսնենք ցաւդ ինչ ա,
ասա որդի . . . մի գէսն արի . . .

ՏԵՍԻԼ Գ

ԳԱՍՊԱՐ ԵՒ ԹԱԳՈՒՀԻ:

ԹԱԳՈՒՀԻ, Ներս գալով և աչքերը պրելով:

Հը, ինչ ես ասում:

ԳԱՍՊԱՐ

Եդ աչքերդ լի՞ ես սրիում, բալամ, ի՞նչ կայ,
աեղդ հօ չե ցաւում . . . թէ ըսէնց բան կայ,
ասա, որթի, ձեռաց էն պառաւ Նուբարին կան-
չենք, նա լսւ հեքիմ ա:

ԹԱԳՈՒՀԻ, Լացը նորոգելով:

Յողեմ ես նրա զլուխը:

ԳԱՍՊԱՐ, զարմացած:

Վա՛ . . . բաս ինչ ա, մի ասա տեսնեմ է:

ԹԱԳՈՒՀԻ:

ԸՆԴՄՈՒՄ . . . բա՛ . . .

3



ԳԱՍՊԱՐ, նոյնպէս:

Տօ մի թէզ արա ասա ու թէզ դնա սմա-
ւարը քցի, մարթա գալու . . . ինձ հետղ
մլու մի անիլ է:

ԹԱԳՈՒՀԻՒ:

ԸՆ, չեմ . . .

ԳԱՍՊԱՐ, չարացած:

Ո՞ց թէ չեմ . . . ես քեզ շանց կտամ
չեմ . . . էրկու սհաթա ինձ զուռնիդ տակին
պար ես ածում թէ ինչա բանի վրայ ե՞ս . . .
(Թագուհին տեղի լսոյ է լվանամ): Վա (էական): Ինչա
բալա ջան, ինչ ա, չլի մօրդ ես միտդ քցէ, հը^թ
. . . բան չկայ . . . որթի . . . աշխարքա,
որթի, վախումես մենք էլ նրա օրը չնկնենք . . .
մի լսց իլ բալէս, մի լսց իլ . . . ասա տես-
նեմ քէֆդ ի՞նչ ա ուզում, ասա հէնց էրուց
առնեմ, ասա, բալէս:

ԹԱԳՈՒՀԻՒ:

Բա՞ աշխարքն աշխարքով էլաւ ու էլի ես
ըսենց եմ:

ԳԱՍՊԱՐ:

ԸՆԸ . . . ո՞նց թէ ըտենց ես . . . (կը

հասկանալով ես ծառընելով) ըլմմ . . . մարթ չը-
քըթանկը քեզ հմա համ . . . բան չկայ, էքուց
էլօր էլ էն կքթնենք:

ԹԱԳՈՒՀԻՒ:

Յողեմ ես մարթի գլուխն էլ, իմ ի՞նչ վախ-
տըն ա, դեռ հլա լաւ հաքնելուս ու ման գալուս
վախան ա, ես ի՞նչ եմ անում մարթը . . .

ԳԱՍՊԱՐ:

Ե՛, վասոք Աստծու, ամեն բանդ էլ տեղն ա
էլի, էլ ի՞նչ ես ուզում . . . համ, ասիր զլախիդ
աղլուս առնեմ, աչքիս վրայ, էսօր մօռացայ,
թէ էրուց տուն չեկաւ, ինչ ուզումես ասա . . .
դէ՛, թէզ արա, պրծի, սմաւարը քցի, մարթ ա
գալու:

ԹԱԳՈՒՀԻՒ, լցուած սրտով:

Փա՞ս . . . մի աղլուխով ուզում ես խափի
համ . . . խալիսի աղջկերքը մօղնի շորեր են
հաքնում, սհաթ, մեղախօն, ճակատի քորոց,
խաչ, չեմ դիտի թէ ընչեր են քցում, մարթամի-
չի մարթ են էրկում, ամա ես էլի էս եմ, էլի էս:

ԳԱԱՊԱՐ, բարեացած և սառած:

Ընդունակ . . . աչքս լիս . . . մօդնի շորեր . . .
մօդնի . . . (ստամած) մօդնին ո՞րն ա, աղքէ, ի՞նչ
ես ասում . . . (հանդիսականաց) Այ քեզ օյին . . .
մօդէն մեր տունն էլա ուզում մանի . . . (չուռ
չեալ իթելը) վայ հարայ . . . ընչանք հմի ես
էի սրան գովում, աշխարի մեջ ինձ էլնէկ էի
տալի, որ էս թաւուր աղջիկ ունեմ ու հմի
ըսենց . . . (թագուհուն) գնա, գնա բանիդ,
սմաւարը քցի—մօդի անըմ մի տա թէ չէ . . .
հըման . . .

ԹԱԳՈՒՀԻ, չարացած և լացով:

Ի՞նչ ա ինչ, բա ըսենց էլ էս այսամին աղ-
ջիկ կպահեն, մի տես իմ թայդաշներին է, մի
տես էն զազազ գէվոյի աղչկան է, մի տես փր-
ռնչի գրիգորի թոռին, Մկրտչենց կատօյին, Քար-
կուտուտենց հարսին, Մարուքենց թէկուն,
կարօյենց Աննային, Կուռկուռենց Մաթանին . . .
որ մինն ասեմ . . . մի նրանց էլ տես է, նրանք
ով են, ում շունն են, հլա ով դիտի սկի տանն
էլ մի կտոր հաց չունեն ուտելու, ամա նրանց
հաքուստը մի մտիկ արա, մի նրանց էն դքսե-
րին մտիկ ու ետեւ ասաւ:

ԳԱԱՊԱՐ, բարեացած:

Տօ նրանք մենձով ու պուճուրով դալաթ են ա-
նում, գըլիները քարովն են տալի որ ըտէնց են
անում, մի մենձ սխոսոր էլ նրանց հերելն ու
ախաղելուին են ուտում, որ ըտէնց են անում
. . . : Փիսամ . . . գնա, գնա ջնադամվեր
սմաւարը քցի ինքդ էլ թամուզ հաքնուի, ա-
մօժ ա, մարժ ա գալու . . . հմի ուր որ ա
աշկերան էլ կգա, տեղ եմ զրկէ, մնացածն էլ նա
կանի: (թագուհին չէ շարժվում գեղից: Հանդիսականաց)
Ըսենց էլ բան կլնի . . . ես ընչեց եմ փախ-
չում, տես ըչե՛ եմ ուստ գալի . . . Մեղա-
քեզ տէլ Աստօծ համ . . . ախր մեր առու-
տուլը . . . (գեղնուամ է թագուհուն) Ախչի, գու-
հլա ըստեղ եմ . . .

ԹԱԳՈՒՀԻ, բացասական շարժուելով:

Չեմ . . .

ԳԱԱՊԱՐ:

Ո՞նց թէ չեմ:

ԹԱԳՈՒՀԻ, նոյնպէս:

Չեմ . . .

ԳԱԱՊԱՐ:

Փիսամ . . . տօ գնա սմաւարը քցի է

ԹԱԳՈՒՀԻ:

Ըմբ . . .

ԳԱՍՊԱՐ, աւելի բարկացած և հանդիսականաց: Վա՛, ըսենց բան հէջ տեսել է՞ք . . . (իթա՞ն պաղելով և էտիով) Ա՛յ որթի բոլ էլաւ, ամօթ ա . . . գու հօ նրանց թայը չես . . . ախր չես իմանում թէ էն թաւուր ախչկերանց հերերն ու ախպերները ինչ հալի են է . . . ընչանք ըստեղ պարտքի մէջ թաղուած են . . . էքուց ա թէ էլօր պարտքատերերը վդներին կչռքեն ախր:

ԹԱԳՈՒՀԻ:

Խի՞ որ, գու էլ պարաք ունիս հա՞:

ԳԱՍՊԱՐ, առանձին ինքնահաւանութեամբ:

Չէ, որթի ինձ պարտքը մրոգիան ա, հլա շատերը ինձ են պարտական, մագեամ գու էնթաւուր հեր ունի՞ս:

ԹԱԳՈՒՀԻ:

Բա՞: Նրանք որ պարտք ունեն ու ընենց են պահում իրանց ախչկերանց ու քուերտաննց, բաս գու որ չունես ըսենց պաի պահե՞ս:

ԳԱՍՊԱՐ, խօսքում բանուելով:

Ա՛յ քեզ բան . . . ես ինքս իմ լեզուովս

Թալաք ընկայ: (Թագուհուն:) Ա՛յ որթի, ախր ես էլ ինձ ու գեօրայ պարտքեր ունեմ . . . Ախր . . . գէ լաւ, լաւ, թէ էգուց աղլուխտ չեկաւ, ինչ ուզումես ասա:

ԹԱԳՈՒՀԻ, մի փոքր սիրտ առած:

Աղլուխտ որն ա, այհու:

ԳԱՍՊԱՐ:

Բաս էլ ինչ ես ուզում ախր:

ԹԱԳՈՒՀԻ:

Ես ումնից եմ պակաս, որ էսքան զուրկ եմ մնայէ . . . մի խալիի ախչկերանց էլ մաիկ արա. էնթաւուր մինթանէք են հաքնում որ՝ ամեն մինը բերդան եռասուն քառսուն արշնից ա:

ԳԱՍՊԱՐ, արհամարհելով:

Հմի գու էլ ես ուզում ուզել էնթաւուր մինթանէք . . .

ԹԱԳՈՒՀԻ, հաստատ:

Բա՞ . . . ումնիցն եմ պակաս:

ԳԱՍՊԱՐ, գառը փռտկացնելով:

Հմի գու էլ ես ուզում էն տաս տասուերկու գուժին կոճակաւոր մինթանից . . . :

— 24 —

ԹԱԳՈՒՀԻ:

ԽՍՇ՝ պարի փոնչու թռող հաքնի ու ես չհաք-
նեմ . . . խի՞ նա մենձ մախկուլ շուն ա:

ԳԱԱՊԱՐ, առանձին:

ԱՀՔՍ լի՛ւ . . . (Արհամարհական) Հմի որիցն
ես ուզում: Էն քառսուն արշնանոց մինթանից
թէ էն չանդալերով վեքաշովի մինթանից:

ԹԱԳՈՒՀԻ:

Դու բեր կտորը, ես գիտեմ ինչ թաւուր
ձեիլ կտամ:

ԳԱԱՊԱՐ, արհամ, նայելով և յետոյ համոզելով

ԶԵ, որթի, մեղինչ կսաղի էդ թաւուր մին-
թանէքը . . . ամօթա բալամ . . . աենաղն
ինչ կտսին:

ԹԱԳՈՒՀԻ:

Տեսնողն ի՞նչ պարի ասի որ մօղայ ա:

ԳԱԱՊԱՐ, նեղացած:

ՀՇՄ . . . մօ՛դայ ա, . . . ջօ, մօղէն ո՞ն ա
ախչե, ինչ մօղա . . . մօղա չի ու մօյդայ ա,
մօյդայ: (Արհամարհական բարկութեամբ): Հմի էն շո-
րերը որ հաքնում են — ասում ես մօ՛դայ ա

— 25 —

Էլի . . . սաղում ա Էլի . . . ես իմ ֆոքին որ
էն վերչի մօյդան նրանից շնորհով ա:

ԹԱԳՈՒՀԻ:

Հա, դու ինձ հմար առ . . . թող մօյդայ
ընեմ:

ԳԱԱՊԱՐ:

Դէ՛ դէ՛, ձէնդ կտրի՛, բոլա . . . էդ թաւուր
մօղէքը իմ գոնովը չեն մանի, չեն . . . Անդա-
ջիցը հան . . . դէ՛, ջշանդամուի, էլ մի
կանի, սմաւարը քցի:

ԹԱԳՈՒՀԻ, երկիրով և բացասական շարժմունքով:

ԱՌՄՄ . . .

ԳԱԱՊԱՐ, աւելի բարկացած:

ՀԸՄ, էլի սատանի թարս ոտին կաննեցի՞ր . . .:
Ես քեզ ասում եմ չի ըլի, չէ . . . ես մուֆթա
փող չունեմ որ համ մսխեմ համ էլ ինձ վրայ
ծիծաղեն, . . . ինձ մասխարա անեն ու ամե-
նից եղեւ էլ ասեն թէ՛ ֆլանի ախչեկը մօյդայ
էր դառէ: . . . ինձ նամուս ունեմ, նամուս
. . . էդ մօյդէքը անդաջիցը հան ու զնա
բանիդ, թէ չէ . . . :

ԹԱԳՈՒՀԻԿԻ:

Չեմ . . .

ԳԱՐՊԱՐ, Հափաղանց բարկացած:

Տօ ես քու հերն էլ եմ անիծէ, տօ քու մօ-
դէն էլ եմ անիծէ, տօ քեզ էլ եմ անիծէ . . .
գուս, գուս եմ ասում իմ տանից, որ էլ քու
թողը չաենեմ . . .

(Թագուհին լացով դուրս է գնում աջ դռնով:)

ՏԵՍԻԼ Դ.

ԳԱՐՊԱՐ, միայն բարկացած.

Ըստնց էլ բան կնէր, որ իմ զլուխն էկաւ:
Ըստնց էլ օյին կլէր, որ իմ տունն էլ մտա՞ւ: . . .
Ախր մի էրկու սհաթ առաջ ես մեռէլ էի խալ-
խի կնանքոնց վրայ ծիծաղալով ու հմի ես եմ
էրվում ու տանջվում էս զիսկում մօյդի հմար
. . . (ռաշլուն սիսլ) Մօյդի ա, մօդի ա, թէ
ինչ զահրմար ա իմ զլիսի՞ն . . . Ըստուր հըմա-
րա ասած թէ, մի ծիծաղա խալխի վրա, թէ
չէ քու զլուխը կգայ, դրուստ որ հմի էկաւ է
. . . : Ախր ափսոս չեին մեր էն մինթանէքը.
ըստեղանց ընչանք ըստեղ (ցոյց պալու մէջն շորջը)
բուզմով, սիրուն . . . գեռ հլա մի կէս թիզ

Էլ կարճ գետնիցը: (Ֆջոյ) ինչքան օղորմածիքս
հաքնում էր հաքնում մինթանէն ու եռե էլ
որ մնշում էր, քանդում էր սիրունիկ ու, եա
մութաքու էրես էր շինում, եա փարուիք էր
շինում, եա ըրէխու հմար տակաշոր էր շինում
. . . ամա հմի էս զիսկում մօդնի ձեւած շորը,
ըսկի մի տիկնու շոր էլ չէ դառնում, էնքան որ
նրանք են կտոր կտոր անում, փոթում ու վեր
ածում . . . Աստօձը վկայ ա . . . (Սիջոյ: Մանէ
գուլիս գլուխը շորժելով և յանշաբճ): Դորժ, էս
գեաղէն ինչ էլաւ ախր է: (Գնումի:)

ՏԵՍԻԼ Ե.

ԹԱԳՈՒՀԻԿԻ, յետոյ ԹէԿԱՐԻ:

ԹԱԳՈՒՀԻԿԻ, աչքերը կարմրած ներս գալով, միայն:

Գնոյց . . . բա՞ . . . հալբաթ որ ըստնց կա-
նեմ, ջհանդամը գեօսը թէ դուս կանի . . .
Ամա որ Ճարի, որ արաքի ընչանք իմ ու-
զածը չառնի ես իմ զիտեցածս պտի անեմ
. . . : Բա, հէնց էս մեր Թէկդուն տես-
նում էք. մի տեսէք թէ ինչ շորեր ու զքսեր
ունի, հլամ էն ամենը բօլ չէր մէդալիօն ու
բրասէթն էլ թազայ ա առնիլ տուեր . . .

(լայտիրէնոն) Բա ես ինսան չեմ . . . էս ամենը
հենց իմ զլսիցն ա կտրուէ՞ . . .

Թէկղի, ներս մտնելով:

Հը ախչե, էլ խի՞ ես էդ օրին, ինչ իսա-
բար ա:

ԹԱԳՈՒՀԻ:

Բա . . . ասումա մօդան իմ դռնիցը մտնիլ չե՞
թէկղի, հետաքրքրութեամբ:

Ինչ ա որ, լաւ սիրուն կպա՞ր:

ԹԱԳՈՒՀԻ:

Վու հաւան կացածը. ինչքան ասեց սըմա-
ւարը քցի, էս արա, էն արա, ամա ես սկի ամե-
նեին տեղիցս ժաժ չեկայ:

Թէկղի:

Ետե՞:

ԹԱԳՈՒՀԻ:

Ետե էն տեղը հասաւ որ ասեց զուս իլ . . .
զորթ ախչե, թէ որ զրուստ որ զուս արեց, ևս
ինչ անեմ էն վախտը:

Թէկղի, սասափկ ծիծաղալով նորա խօսքի վերայ:

Ինչ էրեխա էրեխա խօսում ես, ախչե . . .

ԹԱԳՈՒՀԻ, դարմացած:

Ինչ ա որ:

Թէկղի:

Ըտենց էլ բան կընի՞, քա՞: Նա կարա սկի
գու ոտը շէմքից գուս դնի՞ . . .

ԹԱԳՈՒՀԻ:

Է՞ բան ա, բարկութիւն ա՝ արաւ արաւ, էն
վախտը:

Թէկղի:

Այս ո՞նց կլի է՛ Ախչե, զու հանաք մաս-
իսարութիւն ես իմանում զուս անելը . . . էն
էլ ախչեկ խիղանի՞ն . . . էն էլ քէ պէս մի
հասած ախչկան . . . : Այսու ու . . . :

ԹԱԳՈՒՀԻ:

Եանի զորթ ես ասում, որ չե կարա զուս անի:

Թէկղի:

Թէ որ զուս անի . . . թէ որ ոտդ շէմքից
զուս դնի, բաս ես իմ մուրազն ո՛չ հասեմ,
բաս արի ու մի լաւ կում արա ու էրեսիս թքի,
բաս արի էս իմ ջուխտ աչքս հան: Ի՞նչես
ասում քա, զուս անի զուս անի, էն էլ ով, քու-

Թէկղի:

Հա, թէ որ ըտէնց ա ես գնացի, ամա ինչ
որ ասի հա . . . պինդ կենաս հա . . . քեզ
հմար եմ ասում ախցի, թէ չէ ի՞նձ ինչ, ասում
եմ դու էլ մարթահետարում ընես, դու էլ քու
թայ ախչկերանցից պակաս չնաս . . . (Կան-
նուով գնալ, յետ է ռտանում): Այ, էլ եմ ասում.
ընկի ոտերը, ձեռ ու ոտք պաշի, աղաչի, պա-
ղատի, թէ որ տեղն էլ ընկի հարբուգոր արա
նրա ասածները մի լսի, ինչ որ ասի թարսը
արա ու դու քու ուզածը ուզի ու ասածդ արա
. . . հասկացար: (Կառա վաշէլ) Ես գնացի:

ԹԱԳՈՒՀԻ, Ետկից:

Լաւ, լաւ, ես զիտեմ հմի: Դու զնա:

ՏԵՍԻԼ. Ω.

ԹԱԳՈՒՀԻ յետոյ ԳԱՎԱՐ:

ԹԱԳՈՒՀԻ, միայն:

Առւտ ա ասում հմի Թէկղի՞ն . . . Ես իմ
Աստօծը որ զրուստ ա ասում . . . բա էս էլ
օր ա որ քաշումե՞մ . . . թէ որ ես էլ խալիի
ախչկերանց նման ընկի, ընչանք հմի ես ում-
նից պակաս կհաքնուեի . . . բիրադի էլ իմ

Հէրը . . . էն էլ էն կակողաերես մարթը . . .
նա հմի փոշմանած էլ կլի, որ քեզ ըտէնց իոս-
քա ասէ, ես իմ Աստօծը:

ԹԱԳՈՒՀԻ, պիտ առած:

Հմի ասում ես պինդը բռնացնեմ էլի:

Թէկղի:

Դու պինդը բռնացրու, մի վախի, ինձ լսի
ու չես փոշմանի . . . բախտդ էլ էնքան կտրել
ա որ կակողաերես մարթա . . . (Միջա) Ալաչի
քու հէրը իմնընի հա, էկ թաւուր բաներ կու-
զեմ նրանից (արհամարհական) մօդնի մինթանա
կուզեմ նրանից . . . այ հուր . . . էլ բուլվար
ու կլուր կթողնեմ որ մնայ, էլ թիատր ու ուխ-
տատեղեր կթողնեմ որ մնայ . . . չեմ զիտում էլ
դռնախլող ու լոտո կթողնեմ որ մնայ . . . հլամ
վախեցի (Ճիծալով) որ դրոշկայ եա ֆայտօն էլ չառ-
նել տամ ու նրանով ման դամ (Բարձր Ճիծալ):

ԹԱԳՈՒՀԻ:

Լաւ, լաւ, դրանք թող Թէկղի ջան ու դնա,
հմի ուր որ ա կայ հայրիկա, զիտեմ, չունքի
մարթ ա գալու: Քեզ ըտեղ անսնի, լաւ չի,
վախումեմ բան հասկանա:

շունը կընեին հօ . . . (Սիջոց) էսքան տարեկան
ախչիկ եմ մի մօդնի շալ մինթանան ի՞նչա՝ մի
մօդնի շալ մինթանա էլա իմ օրումը չեմ հաքէ
. . . բա ես ջահել չիմ, եմ սիրտը չի ուզում
(Տառ է Գուլիս): Ա՛լս . . . թէ մի ես էլ էն Կա-
տօյի մինթանից հաքնէի, էլ գարդ չի ունենա
. . . ախր չէք իմանում թէ ինչ թաշախուստի
մինթանա ա է՛ . . . մեռնեմ ես էս մօդա մօ-
դնողի զլսին . . . եարար Կատօն էն մինթանի
կվեկիլը (Վայրոյն) որդիան ա քթէ, թէ կա-
րիլ ա տուէ չեմ իմանում. մի խօսքով դու նրա
էն սկլատկէքին մտիկ, նրա էն աբորկէքանցը
մտիկ, նրա կոճակ ու ջէրերին մտիկ, Փորմու
մտիկ, նրա կոճակ ու ջէրերին մտիկ, (Եարկանց) Ը հմ, ես իմ
Փասօնին մտիկ . . . (Եարկանց) Ը հմ, ես իմ
մօր ախչիլը չնեմ, թէ իմ ուզածը անիւլ չտամ
. . . դու մի եավաշ . . .

(Պիրոց Գառապարի չայսով լավագութէ). Աղա՞ . . . Մել-
քոմ . . . Մելքոմ. . . Փիամա՞ . . . ինչ էլաւ
էն անիծածը):

ԹԱԳՈՒՀԻ:

Ը հմ . . . էկաւ . . .

(Ներս է մտնում Գասպարը, Թագուհին ցոյց է տալիս թէ
իր սաստիկ լաց է լինում:)

ԳԱՍՊԱՐ:

Տօ էն հառուամկագէն չեկան (Կապուամ է Թա-
գուհու լայլ): Վամա՞ . . . ախչի հլա լաց ես
ընում . . .

(Թագուհին աւելի ձայնը բարձրացնելով, հեցկտումէ)

ԳԱՍՊԱՐ, դոթով և գրկախառնելով:

Բո՞լա, բալա ջան, բոլա մի՞նուճար ախչիկ
ջան, բոլա:

ԹԱԳՈՒՀԻ, լացով:

Մինուճար ախչիկ եմ, ընդուր հմար ես տա-
նից դուս անում է՛:

ԳԱՍՊԱՐ, չամողելով:

Ե՛հ . . . ասենք ասեցի, բարկացած էի՛ ա-
սեցի, բալէս . . . արտասունքող սրիի, պմօթա
. . . հէր եմ, կբարկանամ էլ բա . . . հօ դուս
չարեցի քեզ էն սհաթին . . . տեսար՝ ես դուս
գնացի . . .

ԹԱԳՈՒՀԻ, առանձին:

Թէկղին ինչ սրանց Փանդը գիտի է՛:

ԳԱՍՊԱՐ:

Ուէ վեկաց, ամօթ ա, սմավարը քցի, հմի էն

մարթը կգայ . . . ինքդ էլ մի թամուզ հաք-
նուի . . . չայն էլ դու կրերես, հասկացմբ:

ԹԱԳՈՒՀԻՆ, խոյն լացը կտրելով և որպախ:

Հայրիկ ջան, ասումես էքուց կառնես էն
մինթանից:

ԳԱՍՊԱՐ, առանձին:

ԱՅ քեզ բան . . . կակող դամարիցս բըռ-
նեց . . . է՛շ՝ հինչ ես էդ մօդէքանցը կպէ,
ամօթ ա որթի, զլսիցդ հան, բալամ:

ԹԱԳՈՒՀԻՆ, խոյրելով:

Հայրիկ ջան, հայրիկ, ոտիդ տակին մեռնեմ
հայրիկ ջան, քու ցաւը տանեմ հայրիկ ջան
(չէառաջ ռածով տաշում է և համբուրում): Հէնց ինչ
որ ասես, մի՞նմուտ գետին չեմ քցի, հայրիկ ջան:

ԳԱՍՊԱՐ, կակլած, առանձին:

Տէր ողորմած Աստօձ համ . . . Աստանի
ձեռք ընկանք մենք էլ . . . Ախր ըսէնց են
անում, որ մարթի բողադ են կտրում է . . . Դէ
արի էս աղաշանք, պաղատանիքին դիմացի . . .
(հանրիսան). թէ մարթ էք, դիմացէք հը . . .

ԹԱԳՈՒՀԻՆ, կամալով և կամենալով ոտքը համբուրել:

Հայրիկ ջան, հայրիկ . . . (առանձին) կակլց . . .

ԳԱՍՊԱՐ, բարձրացնելով թագուհոն:

Մեղա քեզ Աստօձ հա . . . (իտէնալով հա-
նովէլ) Այ որթի, ախր դու իմ դարդը չես հաս-
կանում . . . դու գեռ հլա ջահել ես բալամ
. . . Դու որ ուզումես էդ թաւուր թաշա-
խուսաներ բանացնես, ախր էդ զիսկումին էրկու
բան ա խառնում է . . . ինչ անեմ որթի,
թէ չէ չեմ ուզի՞ . . .

ԹԱԳՈՒՀԻՆ:

Ինչ ա որ, ինչ ա խառնում հայրիկ ջան . . .
իմ սրտի սին հայրիկ ջան . . .

ԳԱՍՊԱՐ:

ԱՅ որթի. մէկ որ էդ թաշախուսաներին իմ
մէջկը չե դիմանա, մի իրեք անքամ որ էն թա-
փուր շորեր հաքնես՝ պտի տուն ու տեղս ծախեմ
որ քու ուզածը կատարեմ, բալաջան, ամա-
բայց քեզ եմ հարցնում, կլնի՞:

ԹԱԳՈՒՀԻՆ:

Ետ ոչինչ . . . բան ունես ասա, քու զլուխը
ապա ըլնի ինձ հմար:

ԳԱՍՊԱՐ:

Ոչինչ ես ասում. չես իմանում բալա ջան, թէ

կապէկները ինչ գժարութիւնով են աշխատվում,
չես իմանում թէ մի կապէկի ետևից քանի դիւլ-
լա ենք քյում ու անջախ անջախ ենք ձեռք
բերում էն կապէկը, եա քանի քանի անքամ
ենք ֆոքիներս կորցնում ու մեռեներս գերեզ-
մանից հանում ու անջախ անջախ ծերը ծե-
րին հասցնում . . . ամա գէ դու ասում ես
„էդ ոչինչ“ . . . էդ որ ոչինչ, բաս ի՞նչը ինչ
. . . բա . . . մէկէլ էս ա որ, այ որթի,
հմի տանստանու խօսենք, դու որ էդպէս զար-
թարուես թէ մինթանէքով, թէ զքսերով, քեզ
ով կառնի . . . քեզ եմ հարցնում Շը . . .

ԹԱԳՈՒՀԻ:

Ֆողեմ ես առնողի դլուխը, ես էս տանից
ոսս դուս չեմ գնի:

ԳԱՍՊԱՐ:

Դու ըտէնց կասես . . . քեզ էդ կսազի, որթի:
Ախր դու մի ֆիքը արա . . . մտածի . . . հաս
կացի որ էդ թաշախուստներդ տեսնող իմ թայ
մարթկերանց տղերքը քեզ չեն առնի, կվախեն
շորերիցդ „նրա թաշախուստների տակիցը չենք
կարա դուս դայ“ կասեն . . . չինովնիկն էլ լա-

յաղ չե անի մեղ . . . բա ես ինչ անեմ, այ
որթի, էս վախար էլ ում տամ քեզ . . . դու
ասա հը:

ԹԱԳՈՒՀԻ:

Ֆողեմ ես նրանց դլուխը. ես օչովի չեմ ուզի:

ԳԱՍՊԱՐ:

Բա՞, ըտէնց ա որթի, հմի հասկացա՞ր: Ախր
սարարը ըտուր խաթէր հմարա, որ քու ուզածը
չե ընում է . . . (շպապա) Հա, գէ գնա բալա
ջան, ամաւարը քյի, թէզ արա, մի ուշացի:

ԹԱԳՈՒՀԻ, ԹԱԼԱԼՈՎ:

Մինթանի կտորը էքուց կբերես, հայրիկ ջան:

ԳԱՍՊԱՐ, բարկանալով:

Զէ, չէ, ու չէ, հասկացա՞ր . . . Տէր ողոր-
մած Աստօծ հա. զիլի զլսին աւետարան կար-
թացին, ասեց թէ թէզ արա, ոչխարները տա-
րան . . . փիամ . . .

ԹԱԳՈՒՀԻ, նորէն լաց լինելով

Ռմմ. . . բա՞ . . .

ԳԱՍՊԱՐ, առանձին

Ես ինչ անեմ հմի, հը . . . թէ վերցնեմ
ոտիս տակովը տամ ու մին, էրկու, իրեք . . .
վախմեմ մի վլաս տամ, ախչիկ խիզան ա, հա-
մել դէ ծնողի սիրտ ա, ինչ անեմ: Արի հմի
սրան հասկացրու որ մի քիչ էլ կարման նի պազ-
վօլոյետ . . . (առելի բարեցած) Ախչի թէդ արա
սմաւարը քցի է՛ . . .

(ԹԱԳՈՒՀԻԿԻ, աւելի և աւելի սկսումէ լաբ. Գասպարը
բարկացած ման է գալիս, թագուհու լացը սկսումէ կամաց
կամաց նորա գոթը շարժել: Կակոսմէ է:

ԳԱՍՊԱՐ:

Դէ լսւ լսւ որթի ջան, թող քու ասածն
ընի հը . . . Ճարս ինչ . . . ովկէ՛ . . .

ԹԱԳՈՒՀԻԿԻ, վեր թռչելով տեղից և որակո:

Եգուց կրերես, հայրիկ ջան:

ԳԱՍՊԱՐ, խեղճացած:

Ճարս ինչ . . . ջանս էլ չի դուս գայ:

ԹԱԳՈՒՀԻԿԻ, թռչելով հօր զիրկը. ուրակո:

Վայ ես քու հոքուն մեռնեմ, հայրիկ ջան
. . . (վըս պալով) հմի, էս սհաթին սմաւարն
էլ կըցեմ, թամուզ էրեսս ու ձեռքերս էլ կըւա-

նամ, կհաքնուեմ, չայն էլ կըցեմ, ստաքանները
կարփեմ ու կսպասեմ զոնաղի գալուն, հայրիկ
ջան (կաթնաղով բռնը վաղէլ յեղ է գով): Առւղես,
հայրիկ, էս մինթանէն բերել տամ, որ տեսնես
ու էս ու գեօրայ կտորը առնես:

ԳԱՍՊԱՐ:

Լսւ, լսւ, դէ բեր . . . համա չէ՛ . . .
սմաւարը քցի, ետեւ:

ԹԱԳՈՒՀԻԿԻ, ուրակո:

Ես սհաթին (բռնը է լեռնամ):

ՏԵՍԻԼ, Է:

ԳԱՍՊԱՐ յետոյ Վ. Ա. Բ. Գ. Ա. Ա. Ա.:

ԳԱՍՊԱՐ, միայն:

Տեսանք . . . ըսէնց էլ բան կընի՞ . . . ի՞նչ
անեմ, ձնիս ինչ . . . Ախր ըսէնց պատիմք չի
ընիլ է՛ . . . Ունես, չունես, հարցնողն ով ա,
պտի ընի, ընկերներից պտի ետ չման, թէ
ինչա—մօյդա ա, ոյ զլսկում ընի հէնց լիզուս
մօյդա ա պտառւմ է՛ . . . (մջաց) Բանն էսս
որ՝ պարթան աղէն մի հերձուած փիս բնոււ
թէն ունի, որ իմացել ա թէ իմ ախչին էլ ա

Էս մօդէքանց պոչը բռնում է՛, քարը ինքնիրան
կճաքի ու էլ իմ ախչեկը չի տունի իր տղին . . .
ամա բայց թէ ինչ մարթիք եմ մէջ քցելով՝ էս
բանը զլուխ բերէ, էն էլ Աստօծ զիտի (Լոռում մէ^{շան} հաւայ և գրանց նախոսէննահի դուռն բայց ու լու-^{յոյն}) Էհը . . . թէ ասեմ էկաւ: (Գնումէ ու-
ղի դուռնը, նէրս է ճպառմ Վարդան աշան):

ՎԱՐԴԱՆ ԱՂԱ, Ժակոսով:

Բարի իրիկուն, Գասպար աղա:

ԳԱՍՊԱՐ, ներս ընդունելով:

Այ բարով, հաղար բարով ես էկէ, Վարժան
աղա, լիսը քեզ տեսնողի երեսը . . . համե-
ցէք, համեցէք նստի: Ո՞նց ես, լաւ լաւ ես:

ՎԱՐԴԱՆ ԱՂԱ, նստելով:

Շնորհակալ եմ: Ինչ բարին հարցնենք, Գաս-
պար աղա, ինչ կայ ինչ չկայ:

ԳԱՍՊԱՐ:

Աղութէն . . . Անջաղ, անջաղ դու միլա-
յաղ արիր մեր տունը դալու:

ՎԱՐԴԱՆ ԱՂԱ:

Ախր գէ աշխարի ա, ժամանակ ա, սհաթ ա,

Գասպար աղա, ստոնք էլ մի չարխի պէս բան
են. հմի չարխը անջաղ անջաղ պտտեց, վախտը
թամամեց, գալս հարգաւորեց, ես էլ ըհը . . .
ըստեղ եմ:

ԳԱՍՊԱՐ:

Շատ ուրախ եմ Վարժան աղա . . . որ
արժան արեցիր մեզ (Միջոց և կամենալով շարու-
նակէն նորս խօսով լուսականը) Ամա զրուստ քի աշխար-
քը ոնց որ մի չարխա . . . քանի քանի պտիտու-
ներ ա արէ ու ամեն մի պտիտում քանի հը-
զար միլիօնաւոր բաներ ա գուս քցէ սաղ ամ-
բողջ երգիր վրայ ու ընենց տարած է . . . էդ
բաներից թէ մի էրկուսը լաւ ա, ամա բայց
մնացածը, քեզ ասեմ, կէս կապէկ չամի . . .
մնացածը բիրաղի տեղովը տնաքանդութիւն ա . . .

ՎԱՐԴԱՆ ԱՂԱ:

Բա՛, բա՛ . . . շատ զրուստ ես ասըմ ես ու
իմ Փոքին, այ ասեմ . . . որ ասիր միտս ընկաւ
. . . նոր, գալիս, մի բան եմ տեսէ, մի բան
եմ տեսէ որ՝ չեմ իմանըմ թէ ոնց ասեմ, լիզուս
էլ չի պտտում . . . եանի . . . եանի քեզ
ասեմ հելսա տուեց զլուխս:

ԳԱՍՊԱՐ:

ԽԵՌ ԸԼԻ:

ՎԱՐԴԱՆ ԱՂԱ:

Գալիս եմ դպա դէսը՝ տեսեմ ըհը, մի կնիկ
դռանը կանած, էն էլ ախքատ կնանքոնցից . . .
հաքին ասա ինչ . . .

ԳԱՍՊԱՐ:

ՀԸՆ:

ՎԱՐԴԱՆ ԱՂԱ, մեծ նշանակութիւն տալով:

ՖԼԱՌՆԷԼ մինթանա: Ախպեր ես լաւ դիտեմ
որ տանը ուտելու հայ չունեն է՛, ուտելու հայ:
ՎԱՍՊԱՐ, դառը ծիծաղով:

ՄՅԴՄ ա:

ՎԱՐԴԱՆ ԱՂԱ:

(Այս բառեկ վէլոյ չափալանի ծիծաղով, որոյ գէրջը
դատանուածէ հառ) Դրուստ քի մօյդա ա, շատ լաւ
ես կպցրէ ես իմ ֆոքին: Ախը էս ինչ անա-
քանդութէն ա, ախպէր, էս ինչ օյինքաղու-
թէն ա, ախը մեր երեսնին ինչ կսպի էս
թաւուր մօդէքը . . . (Քրոռ) Բազի մարթ էլ-
կայ, որ իսելքը կնկանը տանուլ ա տալի ու . . .

ԳԱՍՊԱՐ, առանձին:

Չասեցի՞ . . . չեմ իմանում ինչ քեօփակն ա,
Ամա դրուստ էլ ա ասում, ինչ ասեմ:

ՎԱՐԴԱՆ ԱՂԱ:

Բա . . . տեղից վեկենողը Փլանէլ մին-
թանա, չեմ գիտըմ, ճաքատի քորոց ու, խաչ
ու, բիլազուկ ու . . . եա թէ չէ չեմ գիտըմ
ինչ զահրու զիկումներից են խաբար տալի . . .
Սլոր էս թաշախուստներին մէջք պահ ընի որ
զիմանայ, թէ չէ:

ԳԱՍՊԱՐ:

Ճալքաթ, Վարթան աղա, շատ դրուստն ես
ասում ես իմ հոքին:

ՎԱՐԴԱՆ ԱՂԱ:

Ճօ ախպէր, էդ հլա լաւ, բա էս մեր գլուպին
ինչես ասում, որ էս էլ նոր ա մեյզան էկէ:

ԳԱՍՊԱՐ:

Եդ էլ էս տարուայ մօդան ա, Վարթան աղա:

ՎԱՐԴԱՆ ԱՂԱ:

Բա, էլ ասում ե՞ս . . . էն օրը, ինչ զոռով
գիւջով տարան ինձ նկքսե, ես էլ ասի թէ մի

գնամ տենեմ թէ էն ինչ զատ ա, որ էդքան գովը գովարանը են . . . գնացի . . . գնացի ու, ամա ոչ ընէր էն գնալս . . . էրնէկ ուս կոտրվել էր ու չէի գնացէ . . . ջշանդամ, գոնէ հանդիստ սրտով կմեռնէի էլս . . .

ԳՍԱՊԱՐ:

Ո՞ց . . . ընչե՞ց հմար որ Վարթան աղա:

ՎԱՐԴԱՆ ԱՂԱ:

Որովհետեւ նրա հմար որ մեզ էն թաւուր տեղը չե՞ս սազի, չե՞ . . . մեր դաս մարթի ինչ բանն ա ախր . . . (Թղայ) Մտայ նեքսեւ ու ինչ . . . բիրդան ութ իննը տասը ստօլ բաց արած ու չորս դիշն էլ մեր աղա վաճառականները նստոտած . . . կարտ էին հաղըմ . . .

ԳՍԱՊԱՐ:

Բա՛, էդ էլ նոր մօդա ա, Վարթան աղա . . . մեր կնանքոնց լոտոիցն էլ անցկացաւ էդ:

ՎԱՐԴԱՆ ԱՂԱ:

Տօ մի ըստեղ լսի, ըստեղ . . . Լոտօն ո՞ւր սրա առաջին . . . Մարթիքը հօ կարտն էին հաղըմ, նրանց կնանիքն ու ախչկելքն էլ մի

ահագին եքա զալում չորս պօլօլիկ նստոտած էին . . . սագանդալները ածըմ էին ու . . . նըրանցից մի քանիսն էլ պար էին գալիս . . . (Պէտական հայութեան երեսն: Սկզբայ) Ետև գնացի էն մէկել դալը տենեմ ընդեղ էլ . . . միթամ էն էլ մենձաւորների զան էր . . . մուզուկէն զըթհազըթը քցել էր ու՝ մի քանի հայ ու ոռւս ախչեկ պարոններ ու խանքաջներ, ամեն մէկը մի մի ջահէլ տղայ ճանգել էին ու՝ թե թեր վրայ դրած, դոշ դոշ կպած . . . միթամ պար գալիս . . . (Արհամարհութեան հայեաց և Թղայ) ասանչ պար, պար հօ չէր ախպէր սատանի չարիսի Փալակ էր, սատանի չարիսի Փալակ . . . (Երկարացնելով) Ե՞ս որ էն դռան տակից չտեսայ . . . ո՞ր մի աչքովս չնկաւ էս . . . ոնց որ քար ու կարկուտ թափեն զլիսիս, ոնց որ եռման ջուր ածեն վրես, ոնց որ սօդօ-գոմորի մէջ ընկնես . . . ատամներս զըճաւացրի ու փորս բռնեցի ու, եալս . . . էն օրվանից գէսը, քու արեն եմ ասըմ, հլադա խելքս զլուխս չի էկէ:

ԳՍԱՊԱՐ:

Վա՞յ, վայ ոռւզգեար, վայ ոռւզգեար . . . Տէս ինչ տեղն ենք հասէ . . .

ՎԱՐԴԱՆ ԱՊԱ, մի փոքր հանդարդելով:

Բա՛, ախաղէր . . . էլ սրանից ետև ինչ պաի
ընկն մեր ըրեխսեքը . . . (Երկարացնելով) Էն զլու-
պից էկայ տուն թէ չէ, ձեռաց մեր ըրեխուն,
Աստօձ քունն էլ պահի, ասացի որ՝ հըաման . . .
չնեմ շիմանամ որ էն թաւուր տեղ ոտղ զնես
հա՛ . . . թէ չէ էլ աչքիս չերեսս . . . (բար-
էս-լիւնը գալով և տպահելով զլմարացնելով) Ըհմ . . .
ես էնթաւուր խիզան ունենամ, որի բերնից ետ
գլուպի եա մօղի անում լսեմ է՛, Աստօձ վկայ ա,
որ, մի ոտք կդնեմ ոտիս տակը, մի ոտն էլ կը-
բռնեմ ու (ցայ տալով) ինձ Վարդան աղա կա-
սեն, ձեռաց էրկու կտոր կանեմ ու պատեպատ
կում ու ընենց բանֆոքի կանեմ . . . ջհան-
դամը գեօռը թէ սիբիր կտանեն . . . եա թէ
չէ մի կտոր մարգեամուշ ա, կուտեմ ու չեմ
ուզի որ էս թաւուր բան եա տեսնեմ, եա լսեմ,
երկնային արարիչ Աստօձը զիտենա:

ԳԱՍՊԱՐ, առանձին:

Կուժ քեզ ասեմ, կուլա գու լսի (Նորան)
հալըաթ Վարդան աղա, մեղըտոնք չի սազի,
չի: (առանցին) Ես ինձ էի իմանում, ամա սա ինչ
կծու սխառին ա (Ետիկն Առաջալով) պա պա պա

. . . (Նորան) եդ ես տառմ Վարդան աղա,
ախր ամենքն են ըտենց է՛ . . . էլ ախ-
քատ ու հարուստ չկայ, քոմմա, բերաղինն էլ
հէնց էդ ճանփեն են բռնէ ու ընենց էլ գնում
են . . . ամա բայց թէ որտեղ պտի բարակի
գեռ հալա մալըմ չի . . .

ՎԱՐԴԱՆ ԱՊԱ:

Իմ ասիլս էլ էդ ա, ախր ես էլ եմ էդ մե-
խին խիում է: Ախր հէնց վասն ըտուր խաթեր
հմար ա, որ քեզ հետ ուզումեմ բարեկամու-
թէն անեմ է . . . չունքի դու էլ իմ սիրտն ու
գեօրա մարթ ես (առանցին) Զէ, աս էլ ա իմ
խասեաթին էրկըմ, ախչիլը հօ, իմ ուզածը
կընի ու իմ ուզածը . . .

ԳԱՍՊԱՐ:

Մենակ էդ չի, էդ, Վարդան աղա, մեր էս
աշկերտներն էլ են ախր զալըացէ, մեր էն պըս-
տիկ հառամզաղին իրեք սհաթ ա տեղ եմ զը-
կէ; ընչանք հմի գեռ հալա չի էկէ, էն օրն էլ,
զնում էի բազարով, տեսնեմ հեռուանց հեռու,
մեր փուշ փչացածը, մօտացել ա էն թուրք Զա-
Փարզուլուն ու մի շահու բամբակ ա առնում,
առնելուց ետև Վարդան աղիս ասեմ, էն թուր-

քին ասեց թէ բամբակը ճխտի (հառնուամէ ինչը, յոյց պաշտամալ չեւ և մասն իրեւով յեղեւի իրշնց եւր ետին) ըստի, չունքի, ասումա, բազարից բանըման պաի առնեմ, էլ բամբակին տեղ չեւ նիլ գնելու, համել ցուրա՝ ամի քիչ մէջքս տաք կպահի, դու մի՛ ասիլ՝ դա առաջուց տեսել ա որ դախլը բաց ա, փողով էլ լիքը . . . էդ ֆանդով էլ ուզում ա փող սպազնի նրանից . . .

ՎԱՐԴԱՆ ԱՂԱ:

Փու էդ աշկերտը:

ԳԱՍՊԱՐ:

Հա, հա, մեր աշկերտը ինչ կասես, որ էն թուրքն էլ բանից բեխաքար, ծիծաղալով, իր հարեւանին գեօր բունի նէջա փալանըրամ“ ա ասում ու բամբագը ճխտում վիզը: Նա էլ առաջին, ըսենց կռացած (յոյց է պաշտ չեւ) եաւ վաշ եավաշ ըսենց, փողը գուստալի դախլից . . . Սրան ինչ ես ասում:

ՎԱՐԴԱՆ ԱՂԱ, շուապա:

Ետև:

ԳԱՍՊԱՐ:

Ետև որ, մօտեցայ թուրքին ասեցի. այ աղսախկալ, ինդի սան բունի փալանըրան, եօդ-

սա բու սաննա“ նոր գեազին բռնել եմ, մի լաւ քոթկէ ու փողերը ձեռից խլէ, տուէ էն մարթին ու իրան էլ տուն զըկէ: Ա՞յ, որ բանի ես զըկում ընչի են գնում: Էս էլ իրան ու գեօրա մօդա ա:

ՎԱՐԴԱՆ ԱՂԱ, անհամբերութեամբ:

Բաս ետև:

ԳԱՍՊԱՐ:

Ետև . . . էլ ինչ ետև ըտէնց արեցի էլի:

ՎԱՐԴԱՆ ԱՂԱ. ատամները զբնտեցնելով:

Տօ դուս արա է, աօ տանիցդ կորցրու է՛ . . .
էլ թաւուրներին խի՞ ես պահում ախր:

ԳԱՍՊԱՐ:

Հենց օրն էքուց պաի դուս անեմ: Բա, Վարթան աղա, այ էս էլ քեզ նոր մօդա . . . Դորթ (վէդէնտալ) մի տեսնեմ ինչ էլաւ էն փուչ վիրչացածն է՛ . . . (գնուամէ) հմի էս սհաթին դալիս եմ:

ՏԵՄԻԼ. Ը.

Գ. Ա. Ր. Դ. Ա. Ա. Հ. Ա. յետոյ թ. Ա. Գ. Ո. Ւ. Հ. Ի.:

Վ. Ա. Ր. Դ. Ա. Ա. Հ. Ա. գլուխը շարժելով:

Աշկերտն ա ասում, աշկերտը . . . որ մի բանն
ա դրուստ էս այամի, որ էդ դրուստ ընի. Էլ աշ-
խարքիս էրեսին ամօթ հայա չկայ, (չուերը երա-
քաւըն) վերացել ա վերացէ . . . հմի ոչ կա-
նիքը իրանց տղամարթի պատիւն են իմանում,
ոչ ըրեխեքը իրանց ծնողների, ոչ աշակերտները
իրանց աղեքանց, ոչ առուտուրականը իրա առ-
ուտուրի, ոչ էլ արհեստաւորը իրա արհեստի
. . . Էլ մենձ ու պուճուր չկայ . . . ամենքն
Էլ իրանց հմար աղա են, ամենքըն Էլ իրանց
գլխի ու խօսքի տերն են . . . : Ծոմ ու պաս
պահելն Էլ վերացաւ, եգեղեցի գնալն ու մում
վառելն Էլ վերացաւ, էս Էլ վերացաւ, էն Էլ վե-
րացաւ . . . մի խօսքով ամենն Էլ վերացաւ . . .
ախր էս ամենն Էլ մօդի շնորքն ա, ախր ամեն-
քն Էլ մօդի ետեկից են ընկնում չէ . . . իրար
մոհիկ անելով ինչ ասես որ չանեն . . . Աստուածը

չկայ ա, որ մի մենձաւոր, ես նրա կնիկը մի
աղուեսի պոչ ցից անի զլիսին ու ասի մօդա ա,
Փռանգստանից ա էկէ էս մօդան է՛, կտեսնէք
բերազինն Էլ ունեն նրանից, քոմմա, բերազինն
Էլ ցից պտի անեն, թէ ինչ ա - մօդա ա, Փռան-
գստանից ա էկէ . . . Զէ՞ որ աշկերտների
ետանալն ու արարմունքներն Էլ իրանց մօդան
ա . . . (Խորհրդատաղ չեռն) ամա . . . է՛ն ջո-
կողութէնով մենակ, որ սրանց մօդէն Փռանգս-
տանից չի էկէ, սրանց մօդէն ոռողզեարն ա
դուս բերէ, ոռողզեարը . . . (չոր և դասն ծիծաղ)
Հայ գիղի ոռողզեար, հա՞ . . .

(Ներս է մտնում թռչկոտալով Թագուհին, մօդնի մինթանէն
երկու ձեռքով բարձր բռնած, որը պատճառ է լինում Վար-
դան աղի երեսը չտեսնելու):

ԹԱԳՈՒՀԻԿԻ:

ԱՌ, հայրիկ, ես Էլ եմ սրանից ասում, տի՞ս
. . . (Աչը է դնուամ Ատիտի վերայ կոտոնալսն, նոյնողէն
չնկառիւլալ անծանօթին) Կատօյի մինթանէն ա, Թէկ-
զուն ասեցի բերել տուեց . . . (յոյց պալով) ԱՌ
էս աբորկէքը, էս Էլ ջերերը հայրիկ ջան, էս
Էլ կոճակները, էս Էլ . . . (Քոսումէ Ատիտի վերայ

իտմնալով յոց դու և մես, իւր ինչով գեղեցիկ և
արժանի ռաշարը բարեւ, հաները մինթանցի)

ՎԱՐԴԱՆ ԱՂԱ, Երկու ձեռքով ծնկներին խրելով
առանձին:

Պապապա, սրա ախչեկն էլ ա մօդնիներիցը
. . . (գլուխ շարժելով) Զելաւ, չելաւ, քանի
թալաք չեմ ընկէ, ըստիան դուս ծկեմ. . .

ԹԱԳՈՒՀԻ, ցոյց տալով:

Ես էլ բանտերը: Տեսնումես, ինչ թաշախուս-
տի զատ ա, կուզես հայնեմ դհա լաւ տեսնես
. . . (էլիւ-լով) Ամա, հայրիկ ջան, ասում ա
32 արշինից անջաղ ա դուս էկէ. . .

(Յարշինը ասելով մի փոքր երկիւրով նայում է իւր կար-
ծեցած հօր երեսին . . . Այստեղ երկոցոնց հայացը հան-
դիպում են իրար: Բայց երր նկատումէ թագուհին անձանո-
թին, իսկոյն վեր է թռչում կանքնած տեղում + Հա Քո՞ Է՞
Քէին ասելով և մինթանան թողնելով թախտի վերայ, դուրս է
ծիկլում դէպի աջ և փախչում: Վարդան աղան էլ իւր կողմից
իսկոյն վեր է կենում և կամենալով օգուտ քաղել գասպարի
բացակայութինից, ուզում է դուրս ծիկէ: Խոյն իսկ միջոցին
ներս է մտնում Գասպարը, նոյն դոմից և տեսնում է երկոցունց
ևս, այսինքն. աղջկան փախչելիս և Վարդան աղային դուր
գալիս, մատը կծումէ:

ՏԵՍԼԱ Թ.

ՎԱՐԴԱՆ ԱՂԱ Կ ԳԱՍՊԱՐ:

(Այս տեսիլը մինչեւ Վարդան աղաի դուրս գնալի կատար-
վումէ ամենայն արագութեամբ):

ՎԱՍՊԱՐ:

Ո՞ւր, ո՞ւր, Վարդան աղա, իսէր ընի:

ՎԱՐԴԱՆ ԱՂԱ:

Շատ վրազ բան ընկաւ միտս, կներես, չեմ
կարա մնալ:

ՎԱՍՊԱՐ, կանգնացնելով:

Եսավաշ, Վարդան աղա, չայ անուշ կանես ետև:

ՎԱՐԴԱՆ ԱՂԱ, կամենալով դուրս թռել:

Զէ, չէ, շնորհակալ եմ Գասպար աղա, քէֆս
էլ իսրար էլաւ: Մի ուրիշ վախտ:

ՎԱՍՊԱՐ, կանգնացնելով և իսկոյն:

Ընչեցդ ես Վարդան աղա . . . ախր . . .

ՎԱՐԴԱՆ ԱՂԱ, նոյնպէս, շտապա

Հեռը հարգեց շատ փիս փորացաւ կպայ,
կներես:

— 54 —

ԳԱՍՊԱՐ, Կանգնացնելով:

Եավաշ Փայտոն բերել տամ, աշկերտը հա-
զեր էկաւ:

ՎԱՐԴԱՆ ԱԴԱ,

ԶԷ, չէ, մնաս բարով (բռ-իս և լուսում):


ԳԱՍՊԱՐ, ետեից:

Արագ, Վարթան աղա, մի թաս արագ . . .
սանջուն կկարի . . . զնաց: (Մէ վորք հնումէ կան-
գնած, երեալ հանդիսականելին բարձնելով, յանհարձ աշ-
չը ընկնումէ լուսնով վէրայ փառծ մինլանույն: Ձեսքը
յեռքի կը լուսուլ և առաջ գոլով) Պահ քու տղիս
տղան, այ ընշեց ա փորացաւ կպէ . . . (ասո-
տիէ յուսոյադութեամբ և բարիացած) Ես էլ քեզ
մօդա . . . (տնշարժ հնում և կանգնած):

ՎԱՐԱԳՈՅԲԸ ԻԶՆՈՒՄ է:



18
42.



18378

ՄԵԶ ՄՈՏ ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ

ԵԼ ՉԱՐՔՍ ԻՆՉ Կամ ԵՐԿՈՒ ՍԻՐԱՀԱՐ
կատակերգութին մէկ արար 35 4.
ՄՈԴԱ, կոմեդիա - վողըլիլ մէկ արա-
րուածով 40 4.

ԳԻՆՆ Է 40 ԿՈՊԵԿ

Օտար քաղաքացիք եթէ յանկա-
նան թէ այս և թէ միւս միշած զըս-
քոյկները թող բարեհաճեն զիմել
մէկ հետեւեալ հասցեով.

Въ г. Эривань
Эмину Іакимовичу Теръ-Гри-
горьянцу.

Въ Типографію его.

Կարելի է զանել մեզ մօս և խաչառոր Տէր Խա-
շատրեանցի (Աշուանիք Խումի) ՔՆԱՐԸ դ. 454.

ՊԱՅԱՋ Է ՏԱՐԱՅԻՆԵԼՈՒ.

ԿՈ-ՈՒԱՊԱՏՃԱՌԸ ԵՍ ԵՒ, ԿՈՄԵԴԻԱ Վ-
ԴԵՄԻԼ մէկ արարուածով:

Տպագրի Ալուստ Խումանական:

2013

